ՎԱՀԵ ՍԱՅԱԴՅԱՆ
ՀՀ ոստիկանության կրթահամալիր, իրավագիտության թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Պատմական հանգամանքների բերումով՝ հայ ժողովրդի կյանքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հոգեւոր-կրոնական առաքելությունից բացի, կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտներում իրականացրել է ազգապահպան գործառույթ։ Դրանցից կարելի է համարել ազգային սովորույթների, ավանդույթների պահպանումը եւ փոխանցումը սերունդներին, կրթության ապահովումը հայ ժողովրդի կյանքում պետականության բացակայության ժամանակ, ինչպես նաեւ մշտապես մղվող ազգային-ազատագրական պայքարները՝ հանուն ազատության եւ հայ ժողովրդի անկախության։

Երկար դարեր իրավունքի աղբյուր է եղել միայն եկեղեցական կանոնական իրավունքը։ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավասության տակ էր ամուսնաընտանեկան, գույքային, քրեաիրավական հարաբերությունների կարգավորումը[1]։ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ոչ միայն զգալի դեր է խաղացել հայ ժողովրդի կրոնական կյանքում, այլեւ ծանրակշիռ մասնակցություն է ունեցել նրա քաղաքական կյանքին վերաբերող հարցերի լուծման գործում[2]։

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին պետականության բացակայության ժամանակ իր վրա է վերցրել պետական կառավարման բոլոր երեք ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների գործառույթների իրականացման դժվարին եւ պատասխանատու պարտականությունը։

---

[1] *Տե՛ս* Հ. Ժամկոչյան, Ա. Աբրահամյան, Ստ. Մելիք-Բախշյան, Ս. Պողոսյան, *Հայ ժողովրդի պատմություն, Երեւան, 1975, էջ 599։*

[2] *Տե՛ս անդ։*

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության մեջ ամենածանր ժամանակաշրջաններից է Ի. դարը՝ հատկապես Ցարական Ռուսաստանի եւ Խորհրդային Միության տարիները։

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական կարգավիճակը բարելավվեց միայն 1918–1920-ական թվականներին, որից հետո Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական դիրքը խախտվեց (Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ մինչեւ փլուզումը, 1921–1991 թթ.)։

Միայն Հայաստանի երրորդ Հանրապետության ձեւավորմանը զուգահեռ կարգավորվեցին Եկեղեցի–պետություն իրավահարաբերությունները։

1991-ին, երբ Հայաստանի Հանրապետությունն անկախացավ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն կերպ սատարում եւ աջակցում էր պետությանն ինչպես ներքին, այնպես եւ արտաքին ոլորտներում։ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ջանք չէր խնայում Եկեղեցի–պետություն իրավահարաբերություններ ստեղծելու համար։ Օրինակ՝ 1990 թ. հուլիսի 20-ին նորանկախ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի անդրանիկ նիստում հայրապետական մաղթանք-կոչով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Պալճյանը[3], ապա՝ երկար տարիների դադարից հետո՝ 1991 թ. սեպտեմբերի 29-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին մյուռոնը՝ անվանելով «Անկախության մյուռոն»[4]։

Ինչպես վերեւում նշել ենք, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու համար ծանր էին Խորհրդային Միության անաստվածության տարիները։ Հայաստանում գրեթե բոլոր վանքերն ու եկեղեցիները վերածվել էին ակումբների, պահեստների, սակայն Հայաստանի երրորդ Հանրապետության անկախացումից հետո բոլոր վանքերն ու եկեղեցիները դարձան գործող, իսկ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող եկեղեցիները, վանքերը ու պատմամշակութային ժառանգություն համարվող կառույցներն անցան պետության հոգածության ներքո։

1991 թ. հունիսի 17-ին Գերագույն խորհուրդն ընդունեց «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը գործում է մինչ օրս։ Լինելով իր ընդունման ժամանակաշրջանի համար

---

[3] *Տես* http://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/1990/10-12.pdf։

[4] *Տես* https://www.qahana.am/am/christian/show/924741049/30։

առաջադեմ եւ ժողովրդավարական փաստաթուղթ՝ այս օրենքը հավատարիմ է միջազգային տարբեր դաշնագրերի որդեգրած սկզբունքներին։

Հանրահայտ ճշմարտություն է, որ յուրաքանչյուր պետության կայունության հիմքերից է Սահմանադրությունը։ Մինչդեռ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը առանց Սահմանադրության գոյատեւեց մինչեւ 1995 թ. հուլիսի 5-ի հանրաքվեն, որում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգավիճակի վերաբերյալ որեւէ հոդված չկար, եթե հաշվի չառնենք 23-րդը[5], ուր ասվում է. «Յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունք։ Կրոնի եւ համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով»։ Նշենք, որ այն ոչնչով չէր տարբերվում Խորհրդային Միության Սահմանադրության համանուն հոդվածից[6]։

1991 թ. հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը փոփոխվել եւ լրացվել է 1997 թ. սեպտեմբերի 19-ին եւ 2001 թ. ապրիլի 25-ին, ամփոփում է Ի. դարավերջի եւ ԻԱ. հարյուրամյակի սկզբի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական կարգավիճակը։ Այնուհետեւ՝ 2007 թ. փետրվարի 22-ին, ընդունվեց «Հայաստանի Հանրապետության եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը[7]։ Այսպիսով՝ Հայաստանը նախկին ԽՍՀՄ Հանրապետություններից երկրորդն է (Վրաստանից հետո), որ օրենսդրական ճանապարհով ազգային Եկեղեցին տարանջատում է երկրում գտնվող մյուս կրոնական կազմակերպություններից՝ ընդգծելով ազգային Եկեղեցու դերը եւ բացառիկ նշանակությունը ժողովրդի կյանքում։ Սա եւս մեկ անգամ օրինական դաշտ է բերում Եկեղեցու եւ պետության միջեւ արդեն առկա օրենսդրական փոխհարաբերությունները կրթական, մշակութային եւ այլ ոլորտներում՝

---

[5] *Հմմտ. Պ. Սերոբյան, Հայ Առաքելական Եկեղեցու իրավական կարգավիճակը. «Քրիստոնեություն եւ իրավունք», էջ 134։*

[6] *Պատճառը Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո անցումն էր նոր ձեւավորվող պետության, որը 4 տարի մնաց առանց Սահմանադրության։ Իսկ 2005 թ. նոյեմբերի 27-ին փոփոխության եւ լրացման ենթարկված Սահմանադրության մեջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը գնահատվեց ըստ արժանվույն։ Վերջինիս մեջ եւս առկա է 1995 թ. ընդունված Սահմանադրության 23-րդ հոդվածը, որից բացի՝ ավելացվել են նաեւ 8.1. եւ 26-րդ հոդվածները, որոնք առնչվում են Հայ Առաքելական Եկեղեցուն արդեն ուղղակիորեն։*

[7] *Տե՛ս «ՀՀ եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է՝ ՀՕ-80-Ն, 22.02.2007)։*

ավելի ընդարձակելով դրանց շրջանակը եւ առավել խորացնելով Եկեղեցի—պետություն իրավական հարաբերությունները։

1991 թ. ընդունված «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը պետության կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ արժանի վերաբերմունքի արտահայտություններից է։ Սակայն այդ օրենքը, իր բոլոր առավելություններով հանդերձ, ուներ մեկ հիմնական թերություն, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին համահավասարեցվում էր կրոնական կազմակերպություններին[8]։ «Կրոնական կազմակերպություն» հասկացության ներքո ընկալվում են բոլոր այն միավորները, կառույցները, որոնք իրականացնում են կրոնական գործունեություն՝ միեւնույն ժամանակ չընդունելով քրիստոնեական վարդապետությունը։

Կարծում ենք՝ անհրաժեշտ է, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես հայ ժողովրդի հոգեւոր կյանքի, ազգային մշակույթի, ազգային ինքնության պահպանման գործում կարեւոր առաքելություն ունեցող կառույց, օգտվի իր հատուկ սահմանադրական կարգավիճակից եւ ճանաչվի ազգային Եկեղեցի։

Մի շարք պետությունների սահմանադրություններով (օրինակ՝ Դանիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն, Հունաստան, Հունգարիա, Մալթա, Մեծ Բրիտանիա, Մոնակո, Նորվեգիա, Վրաստան) նախատեսված է ազգային Եկեղեցու հատուկ կարգավիճակ. Վենետիկի հանձնաժողովը 2017 թ. «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի առնչությամբ ներկայացված կարծիքի 23-րդ կետում նշել է, որ Եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակն ինքնին անթույլատրելի չէ, պարզապես պետք չէ նպաստել, որ այն հանգեցնի կրոնական կամ համոզմունքի այլ համայնքների նկատմամբ խտրականության։ Ավելին. նույն կարծիքի 24-րդ կետում նշվում է, որ կրոնական կազմակերպություններից մեկի համար տարբերվող իրավական կարգավիճակ սահմանելն ինքնին մարդու իրավունքների միջազգային պահանջների խախտում չէ[9]։

---

[8] *Տես Լ. Ավագյան, Եկեղեցի—պետություն իրավական փոխհարաբերությունների շուրջ. «Նորավանք» հիմնադրամ, հոդվածներ եւ վերլուծություններ, 13.09.2007,* http://www.noravank.am։

[9] *Տես* https://www.osce.org/hy/odihr/352161։

Եւրոպական դատարանը 1989 թ. «Darby v. Sweden» *գործով որոշման մեջ անդրադարձել է ազգային Եկեղեցի ունենալու հանգամանքին։ «Պետական եկեղեցի ունենալու իրողությունը» «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի» 9-րդ հոդվածի խախտում չէ։ Պետական Եկեղեցի ունենալու իրողությունը, որպեսզի համապատասխանի նշյալ կոնվենցիայի 9-րդ հոդվածի պահանջներին, պետք է ներառի հատուկ երաշխիքներ անհատի կրոնական ազատությունների վերաբերյալ։ Մասնավորապես, ոչ ոք չի կարող ստիպված անդամակցել կամ լքել պետական եկեղեցին»։*

Միջազգային փորձը թույլ է տալիս եզրակացնելու, որ սահմանադրությամբ եւ օրենքներով պատմական նշանակություն ունեցող ազգային Եկեղեցուն հատուկ կարգավիճակ շնորհելու որեւէ արգելք առկա չէ, իսկ այդ կարգավիճակից բխող որոշ առանձնահատկություններ սահմանելը չի դիտարկվում իբրեւ անհատի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքի խախտում։

Մարդու իրավունքների եւրոպական դատարանի նախադեպերը չեն պարունակում որեւէ արգելք Եկեղեցի—պետություն հարաբերությունների վերաբերյալ։ Եկեղեցու եւ պետության հարաբերությունների կարգավորումը հանձնված է տվյալ պետության հայեցողությանը։

Հավելենք, որ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի, ինչպես նաեւ «Մարդու իրավունքների եւրոպական դատարանի» որեւէ նախադեպ չի պարունակում բացառիկ պատմական նշանակություն ունեցող ազգային Եկեղեցու համար հատուկ կարգավիճակ սահմանելու արգելք[10]։

Հարկ ենք համարում նշել, որ ավանդական Եկեղեցիներին արտոնություններ շնորհելը լայն տարածում ունի նաեւ արեւմտաեւրոպական երկրներում։ Միջազգային այս փորձը վկայում է, որ ավանդական Եկեղեցիներին վերապահվում են անհամեմատ ավելի արտոնություններ, քան ընդունված է հայրենական իրավական ոլորտում։

Այսպես՝ ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի առաջարկությամբ 1997 թ. հուլիսի 14-ի՝ ՀՀ կառավարության №274 որոշմամբ վճռվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն եկեղեցիներ եւ վանքեր

---

[10] *Տես* Ա. Ղամբարյան, Թ. Շաքարյան, *Դոկտրինալ հայեցակարգ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու.* https://www.academia.edu/43591263/։

հանձնել։ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եւ Սուրբ Աստվածածին, Նորատուս գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (Դոփունց վանք), Զորագյուղի Մասրունց Անապատ Սուրբ Կարապետ, Վարդենիկ գյուղի Իշխանավանք եկեղեցիները, Արծվանիստ գյուղի Վանեվանք, Մաքենիս գյուղի Մաքենյաց վանքերն անհատույց հանձնվեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ սեփականության իրավունքով[11]։ 2000 թ. մարտի 17-ին ՀՀ կառավարության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեւ ստորագրվեց «Մտադրությունների հուշագիր», որը հիմք պիտի հանդիսանար Եկեղեցի—պետություն փոխհարաբերությունները կարգավորելու համար։ Սա պատմական կարեւոր փաստաթուղթ էր, որն առաջին անգամ ստորագրվում էր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Հայաստանի Երրորդ Հանրապետության միջեւ։

Ըստ «Մտադրությունների հուշագրի»՝ ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հայ ազգի ինքնության պահպանման եւ Հայաստանի Հանրապետության կայացման ու զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար. «Առանձնակի կարեւորելով պետականության հետագա զարգացման եւ ամրապնդման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անուրանալի դերակատարումն ու նշանակությունը, ինչպես նաեւ առաջնորդվելով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքներով եւ նորմերով՝ նպատակ ունենք առավել պարզորոշել Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունների բնույթը եւ բովանդակությունը»[12]։

Կնքվելիք համաձայնագրի շրջանակներում կողմերի առջեւ ծառացած հիմնախնդիրներն էին՝

Հայաստանի Հանրապետությունը եւ Հայ Առաքելական Եկեղեցու փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործումը եւ զարգացումը,

---

[11] Տե՛ս ՀՀ կառավարության №274 որոշումը՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն եկեղեցիներ եւ վանքեր հանձնելու մասին (սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 11.08.97, ընդունման ամսաթիվը՝ 14.07.1997)։

[12] Տե՛ս «Մտադրությունների հուշագիր Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեւ», 17.03.2000։

Հայ Առաքելական Եկեղեցու՝ իբրեւ իրավաբանական անձի սեփականության (հող, անշարժ գույք, շարժական գույք, պատմամշակութային հուշարձաններ եւ այլն) հետ կապված հիմնահարցերի հստակեցումը,

Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա ավանդական կազմակերպությունների համար որոշակի հարկային արտոնությունների սահմանումը,

ՀՀ զինված ուժերում, զինծառայողների հոգեւոր կյանքում եւ ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, ինչպես նաեւ քննչական մեկուսարաններում, ազատազրկման վայրերում, կալանավորների եւ դատապարտյալների շրջանում Հայ Առաքելական Եկեղեցու գործունեության հետագա ընդարձակումը եւ այլն[13]։

Հայաստանի երրորդ Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է քննել նրանց հարաբերությունները կարգավորող մի շարք օրենքներ։

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետություն—Եկեղեցի փոխհարաբերությունները կարգավորող իրավական ակտերն են՝ ՀՀ Սահմանադրությունը, «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեւ մտադրությունների հուշագիրը»։

Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով[14]։

Պետությունը, նկատի ունենալով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում, նրա դերն ու նշանակությունը հայապահպանության, աշխարհասփյուռ հայերի միավորման, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում, նախապատվությունը տալով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, նրա հետ հաստատեց առանձնահատուկ հարաբերություններ։

---

[13] *Տե՛ս անդ։*

[14] *Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 18.2։*

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային Եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով եւ նվիրապետական Աթոռներով, եւ նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա դերը մշակույթի զարգացման եւ ինքնության պահպանման գործում[15]։

Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունները կարգավորող օրենքի հիմք կարելի է համարել 2005-ի նոյեմբերի 27-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության առանձին դրույթները։

ՀՀ փոփոխված Սահմանադրությամբ, ամրագրելով կրոնի նկատմամբ ժողովրդավարական պետությանը հատուկ իրավական այնպիսի նորմեր, ինչպիսիք են պետության աշխարհիկությունը[16]*, անկախ կրոնական պատկանելիությունից, քաղաքացիների իրավահավասարությունը, նոր մոտեցում ցուցաբերվեց կրոնական կազմակերպությունների հետ հարաբերությունների իրավական կարգավորման, դրանց ոչ դավանաբանական գործունեության վերահսկողության, ինչպես նաեւ երկրում տիրող կրոնական հանդուրժողականության նկատմամբ*[17]։

Բացի ՀՀ Սահմանադրությամբ եւ գործող օրենսդրությամբ ամրագրված որոշակի իրավակարգավորումներից՝ Հայաստանի Հանրապետությունում մտքի, խղճի եւ կրոնի ազատության սահմանադրական իրավունքի իրական երաշխավորվածության մասին է վկայում նաեւ հասարակությունում առկա հանդուրժողականությունը տարբեր կրոնական կազմակերպությունների գործունեության նկատմամբ։ Կրոնական հանդուրժողականության դասական օրինակ է այսօր Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված[18] *64 կրոնական կազմակերպությունների առկայությունը։*

Եկեղեցի—պետություն փոխհարաբերությունները դարերի ընթացքում ձեռք են բերել կրոնական, քաղաքական եւ քաղաքացիական կարեւորագույն նշանակություն։ Հետեւաբար կարող ենք եզրակացնել, որ «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ

---

[15] *Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», հոդված 2 (ընդունվել է 14.03.2007, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 28.03.07/17(541) հոդ. 359)։*

[16] *Տե՛ս «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ», հոդված 26, էջ 302։*

[17] *Տե՛ս* Վ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ, Ա. ՁԱԽՈՅԱՆ, *Եկեղեցի, պետություն եւ հասարակություն, Երեւան, 2009, էջ 22։*

[18] *Տե՛ս* https://www.gov.am/u_files/file/kron/gov_am2019%20Cank.pdf։

Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը բխում է պետության՝ ազգային մշակույթի եւ ազգային ինքնության պահպանման մտահոգություններից եւ ոչ թե Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն մենաշնորհ տրամադրելու ցանկությունից։

ՀՀ Սահմանադրությամբ «Հայաստանի Հանրապետության եւ Հայ Առաքելական Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով Հայ Առաքելական Եկեղեցուն իրավական ակտերի[19] մեջ տրված «ազգային» որակումը բացարձակապես խտրականության դրսեւորման որեւէ երանգ չունի։

ՀՀ Սահմանադրության եւ օրենսդրության համաձայն՝ բոլոր կրոնական կազմակերպությունները հավասար են օրենքի առաջ։ Պետության հետ նրանց հարաբերությունները կարող են գործել ըստ հետեւյալ սկզբունքների.

1. Կրոնական կազմակերպություն-պետություն, որը վերաբերում է պետության եւ կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների օրենսդրական կարգավորմանը,

2. Եկեղեցի—պետություն, որը վերաբերում է տվյալ երկրի ներսում առավել մեծ թվով հետեւորդներ եւ ազգային, հոգեւոր ու մշակութային առավել մեծ նշանակություն ունեցող Եկեղեցու եւ պետության առանձնահատուկ փոխհարաբերության օրենսդրական կարգավորմանը։ Ընդ որում՝ այդ Եկեղեցու տեղն ու դերը պետության կրոնական կազմակերպությունների մեջ կարելի է բնորոշել իբրեւ «առաջինը հավասարների մեջ»[20]։

Ինչպես արդեն ասվել է, Եկեղեցի—պետություն իրավական հարաբերությունները կարգավորվում են փոխըմբռնման եւ վստահության հիման վրա, որը պատմականորեն փոխվել եւ դրսեւորվել է տարբեր եղանակներով։ Հատկանշական է, որ Եկեղեցի—պետություն իրավական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում արտացոլվել են ինչպես աշխարհիկ եւ հոգեւոր ոլորտների ներդաշնակեցման սկզբունքները, այնպես եւ հասարակության կյանքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի բարձրացումը[21]։

---

[19] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, «Մտադրությունների հուշագիր ՀՀ կառավարության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու»։

[20] Տե՛ս Տ. Շահե վրդ. Անանյան, Եկեղեցի—պետություն փոխհարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին եւ ՀՀ օրենսդրությունը, Սբ. Էջմիածին, 2013, էջ 17։

[21] Համմտ. Ա. Քալաշյան, Եկեղեցի—պետություն փոխհարաբերությունները. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ըմբռնումները. «Էջմիածին», Զ., 2012, Ս. Էջմիածին, էջ 63—64։

Գործնական տեսանկյունից մեծ կարեւորություն ունի հատկապես այն փաստը, որ Եկեղեցի—պետություն իրավական հարաբերությունների օրենսդրական կարգավորումն իրականացվում է տարբեր հարթություններով, օրինակ՝ վերոհիշյալ հիմնահարցի նկատմամբ նմանատիպ մոտեցումների հանդիպում ենք նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ եւ օրենսդրական այլ ակտերում։

Եկեղեցի—պետություն իրավական հարաբերությունն օրենսդրության տեսանկյունից մեծ կարեւորություն ունի պետականության պահպանման եւ ամրապնդման համար։ Ուստի օրինաչափ է, որ Հայաստանի Հանրապետությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ճանաչում է որպես ազգային Եկեղեցի, որպես հայ ժողովրդի հոգեւոր կյանքի շինության եւ ազգապահպանության կարեւոր պատվար[22]։

Թեպետ Հայաստանի Հանրապետությունն օրենսդրորեն «արգելում է Եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, Եկեղեցու եւ կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որեւէ պետական ֆունկցիա»[23], այնուհանդերձ Եկեղեցի—պետություն համագործակցության համապատկերում մեծ կարեւորություն է ներկայացնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի անվերապահ ընդունումը, ինչն ամրագրված է օրենսդրական հետեւյալ ակտով. «Պետությունը չի խոչընդոտում ազգային Եկեղեցու մենաշնորհ հանդիսացող հետեւյալ առաքելության իրագործմանը՝ ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում»[24]։

Պետք է արձանագրել այն փաստը, որ Եկեղեցի—պետություն իրավական հարաբերությունների շրջանակներում երկկողմանի ուշադրության կենտրոնում են նաեւ ազգային կրթության եւ դաստիարակության հիմնահարցերը։ Այդ ոլորտում պետաիրավական քաղաքականության ռազմավարական դիրքորոշումն արտացոլված է ՀՀ օրենսդրական մի շարք իրավական ակտերում։ Ինչպես «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների», այնպես եւ «ՀՀ եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքներում ամրագր-

---

[22] *Տե՛ս «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախաբանը։*

[23] *Անդ։*

[24] *ՀՀ օրենք՝ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին». Փոփոխված եւ վերամշակված», հոդ. 17, «ՀՀ եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» 2007 թ. փետրվարի 22-ի օրենք, հոդ. 10։*

վում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարությունը կրթության ասպարեզում[25]։

Մասնավորապես «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի.

ա) հիմնելու կամ հովանավորելու նախադպրոցական հաստատություններ, տարրական, միջնակարգ եւ ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ ՀՀ օրենսդրության շրջանակներում,

բ) մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի եւ դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը եւ դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները,

գ) պետական կրթական հաստատություններում կազմակերպելու կամավոր ուսումնական դասընթացներ՝ օգտագործելով դրանց շենքերն ու ռեսուրսները, այդ հաստատությունների հետ համաձայնեցնելով դասընթացներ կազմակերպելու եւ իրականացմանն առնչվող խնդիրները,

դ) նպաստելու հասարակության հոգեւոր զարգացմանը կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով[26]*,*

ե) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ստեղծած ուսումնական հաստատությունները պետք է ստանան այն աջակցությունը, որը պետությունը ցուցաբերում է մասնավոր հաստատություններին,

զ) պետությունը երաշխավորում է կրոնական կրթության իրավունքի իրացումը՝ կամավորության հիման վրա,

է) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտոնական հաղորդագրությունները զանգվածային լրատվության միջոցները հրապարակում են անփոփոխ[27]։

---

[25] *Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», հոդված 8 (ընդունվել է 02.22.2007, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 28.03.07/17(541) հոդ. 359)։*

[26] *Տե՛ս անդ։ Տե՛ս նաեւ Ա. Քալաշյան, նշ. աշխ., էջ 67–68։*

[27] *ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», հոդված 8 (ընդունվել է 02.22.2007, սկզբնաղբյուրը՝*

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի կառուցելու վանքեր, եկեղեցիներ եւ պաշտամունքային այլ շինություններ, գործող դարձնելու պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող վանքերն ու եկեղեցիները։ Պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող եկեղեցիների եւ պաշտամունքային այլ շինությունների պահպանությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում են համատեղ»[28]։

Համաձայն «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգեւոր, մշակութային ժառանգությունը ազգային ինքնության հենքի կարեւոր եւ անբաժան մասն է։

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սեփականություն հանդիսացող հատվածը կարող է օտարվել կամ պահպանման վայրից փոխադրվել՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն։ Հայաստանի Հանրապետության արժեքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ խորհրդակցելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ[29]։

Պետություն—եկեղեցի իրավական հարաբերությունների զարգացման համար հիմք հանդիսացավ նաեւ այն, որ պետությունն ըստ արժանվույն գնահատեց հասարակության մեջ կրոնական դաստիարակության նշանակությունն ու կարեւորությունը, որում մեծ դերակատարություն ունի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին[30]։

Ելնելով պետություն—եկեղեցի իրավական հարաբերությունների դերից եւ նշանակությունից՝ հարկ է քննել նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունների մասին որոշ հոդվածներ։

«Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է ՀՀ կառավարության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեւ

ՀՀՊՏ 28.03.07/17(541) հոդ. 359)։

[28] *Անդ։*

[29] *Տե՛ս անդ, հոդված 5։*

[30] *Հմմտ.* Վ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ, Ա. ՁԱԽՈՅԱՆ, *նշ. աշխ., էջ 57։*

ստորագրված համաձայնագրով սահմանված կարգի համապատասխան Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հռչակած ամուսնալուծությունները[31]։

Ամփոփելով վերոգրյալը՝ փաստենք, որ Հայաստանի Հանրապետությունում առկա պետություն—Եկեղեցի իրավական հարաբերությունները պատկանում են հետեւյալ ձեւաչափերին. Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավական հարաբերություններին հատուկ են ինչպես անջատական կերպը (երբ օրենսդրորեն ամրագրվում են պետության եւ Եկեղեցու տարանջատման դրույթներ, օրենքի առջեւ բոլոր կրոնական կազմակերպությունների հավասարության, մտքի, խղճի եւ կրոնի իրավունքի ազատության, կրթության աշխարհիկ բնույթի եւ այլ ժողովրդավարական նորմեր), այնպես եւ սերտաճման (ինտեգրատիվ) եղանակը (երբ պետության առաջնորդները Եկեղեցին դիտարկում են որպես իրենց դաշնակից, ակնկալում են նրա աջակցությունը)[32]։

Հայաստանի Հանրապետությունում առկա են նաեւ համագործակցության ինչ-ինչ հատկանիշներ, երբ պետությունը տարբեր կրոնական կազմակերպությունների հետ տարբեր ծավալներով իրականացնում է ընկերային-իրավական քաղաքականություն, որում առանձնանում է «տիրապետող Եկեղեցու» դերը, երբ պետական Եկեղեցին մասամբ իրավական հարթությունում, բայց առավելապես իշխանությունների հետ փոխհարաբերության մակարդակում գտնվում է պետության հովանավորչության ներքո՝ ունենալով հասարակական-քաղաքական մեծ նշանակություն, դերակատարություն եւ զբաղեցնելով տիրապետող դիրք կրոնական դաշտում[33]։

Ամփոփելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանադրաիրավական կարգավիճակի բարեփոխումները Հայաստանի երրորդ Հանրապետության ձեւավորման փուլում նյութը՝ ասենք, որ գալիս ենք այն եզրահանգման, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր դարավոր հեղինակությունն ու դիրքը վերականգնեց միայն Հա-

---

[31] *ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», հոդված 9 (ընդունվել է՝ 14.03.2007, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 28.03.07/17(541), հոդ. 359)։*

[32] *Տես* А. Григоренко, Церковно-государственные отношения в современной России и проблема религиозной свободы и нетерпимости. «Вступая в третье тысячелетие: религиозная свобода в плюратическом обществе», Москва, 2000, *էջ 107։*

[33] *Հմմտ.* Ա. Լուսյան, *Պետաեկեղեցական հարաբերություններ. Հայաստանյան իրողություններ. «Կրոն եւ հասարակություն», հ. 12, սեպտեմբեր, Երեւան, 2010, էջ 24։*

յաստանի երրորդ Հանրապետության անկախացումից հետո։ Այժմ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին վերստին շարունակում է իր ազգապահպան, ազգանվեր եւ անգնահատելի առաքելությունը՝ գալիք սերունդներին փոխանցելով ազգային, հոգեւոր արժեքներ։

РЕЗЮМЕ

Армянская Апостольская Церковь, помимо духовно-религиозной миссии, всегда осуществляла функции образования, развития науки и культуры, а также в период отсутствия государственности брала на себя «функцию государства».

Самым трудным периодом для Армянской Апостольской Церкви стал XX век, который был полон лишений, ограничений и нарушений прав. В начале XX века Армянская Апостольская Церковь находилась под гнетом царской России, и только после, в 1918—1920 гг., с образованием Республики Армения, Армянская Апостольская Церковь пережила период расцвета. За этим последовали 70 трудных и горьких лет лишения права и атеизма. И наконец в конце XX века, в годы Третьей Республики Армения, Армянская Апостольская Церковь получила достойную оценку своей деятельности.

SUMMARY

The Armenian Apostolic Church, in addition to her spiritual and religious mission, has always implemented educational, scientific and cultural functions, as well as the “function of the state” during the absence of the statehood.

The 20th century was the most difficult period for the Armenian Apostolic Church, full of hardships, restrictions and violations of rights. At the beginning of the 20th century, the Armenian Apostolic Church was under the yoke of Tsarist Russia, and only later, from 1918 to 1920, with the formation of the Republic of Armenia, the Armenian Apostolic Church experienced a flourishing period. This was followed by 70 difficult and bitter years of marginalization and atheism. And finally, at the end of the 20th century, during the years of the third Republic of Armenia, the activity of the Armenian Apostolic Church was duly evaluated.